ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ «ԵՍ և ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ ՎԱՐԴՈՒՀԻ ԱՄԱՐՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Վաղատուրի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Ս. Ալավերդյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
«Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակը, խնդիրները և առարկային ներկայացվող պահանջները 4
«Ես և շրջակա աշխարհը» առարկայի ազդեցությունը տարրական կրթական համակարգում 6
«Ես և շրջակա աշխարհը» առարկայի ազդեցությունը կրտսեր դպրոցականի անձի զարգացման եվ դաստիարակության վրա 9
Եզրակացություններ 14
Օգտագործած գրականության ցանկ 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Կրտսեր դպրոցականների սոցիալականացումը ժամանակակից մանկավարժության արդիական հիմնախնդիրներից է, քանի որ տարիների ընթացքում սոցիալական պայմանները ենթարկվել են որոշակի փոփոխությունների և խնդիրներ են առաջացել կրտսեր դպրոցականի սոցիալականցման գործընթացում:

Հետազոտական աշխատանքի նպատակը: «Ես և շրջակա աշխարհը» առարկայից ձեռք բերված գիտելիքները, կարողություններն ու հմտությունները, արժեքային համակարգը շատ կարևոր են կրտսեր դպրոցականների համար: Այն օգնում է կրտսեր դպրոցականին ստացած գիտելինքներն ու կարողությունները կիրառել կյանքում, ավելի հեշտությամբ սոցիալականացվել, դառնալ ինքնուրույն և նախաձեռնող:

Աշխատանքի խնդիրներն են՝

Բացահայտել «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դերը կրտսեր դպրոցականների սոցիալականացման գործում,

Առաջադրել «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման արդյունավետ մանկավարժական պայմաններ:

Հետազոտության տեսական նշանակությունը: «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկայի շրջանակներում բնության տարրերի ու երևույթների ուսումնասիրությունը, սովորողի աշխարհայացքի համակարգված ձևավորմանը զուգահեռ, պետք է հնարավորություն ընձեռի բնության մեջ, դասարանում կամ տանը դիտումների, փորձերի և այլ տարաբնույթ գործնական աշխատանքների միջոցով սովորողի մեջ զարգացնելու հանրակրթության պետական չափորոշչով սահմանված ճանաչողության մեթոդները:

Հետազոտության գործնական նշանակությունն է ցույց տալ, որ առարկայից ստացած գիտելիքների շնորհիվ կրտսեր դպրոցականը կարողանում է հեշտությամբ հարմարվել շրջակա միջավայրին, շփվել մարդկանց հետ, սկսում է գնահատել բնության կարևորությունը, փորձում է խնամել, օգնել կենդանիներին:

«ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(6-10 տ., 1-4 –րդ դ.) երեխայի բնախոսական – կարգախոսական զարգացումը նախորդ փուլի համեմատությամբ մեծ չափով արագանում է, իսկ հոգեբանա – մանկավարժական զարգացման առումով կրտսեր դպրոցական հասակը երեխայի կյանքում շրջադարձային փուլ է, քանի որ նրա կյանքում առաջատար գործունեություն է դառնում ուսումը: Դպրոցական տարիքում խաղը չի անհետանում, այլ կերպափոխվում է իրականությանը համապատասխան: Այն իր ներքին շարունակությունն է գտնում ուսուցման մեջ և աշխատանքում: Դանդաղ բայց անշեղորեն վաղ կրտսեր դպրոցական տարիքի երեխան մտնում է իր նոր դերի՝ ուսումնառուի կարգավիճակի մեջ: Դրան նպաստում են առաջին հերթին դպրոց գնալու և դպրոցական առօրյայի մեջ ձուլվելու հանգամանքը[1]:

Ակնհայտ է, որ II-IV դասարաններում դասավանդվող «Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակության հենքային առանցքը մի շարք գիտությունների՝ աշխարհագրության, կենսաբանության, էկոլոգիայի, հասարակագիտության, տնտեսագիտության, ֆիզիկայի, քիմիայի, առողջ ապրելակերպի, սոցիոլոգիայի և իրավունքի վերաբերյալ գիտելիքների տրամաբանորեն հիմնավորված ինտեգրումն է:

Տարրական դպրոցում դասավանդվող «Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է ձևավորել պատասխանատու և հոգատար վերաբերմունք բնության, մարդկանց, շրջակա միջավայրի նկատմամբ, տարրական գիտելիքներ հաղորդել բնության անկենդան և կենդանի տարրերի, մարդու, երկիր մոլորակի վերաբերյալ: Առարկայի բովանդակային բաղադրիչներն ընձեռում են նրա ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, դասընթացի յուրացման համար անհրաժեշտ մանկավարժական պայմանների մշակման հնարավորություն: «Ես և շրջակա աշխարհը» առարկան ունի էկոլոգիական դաստիարակության մեծ ներուժ: Առարկայի բավանդակության ուսումնասիրման ընթացքում սովորողները ծանոթանում են շրջակա աշխարհին, այնտեղ կատարվող բնական երևույթներին,

[1] «Բնության պահպանության հիմունքներ» Է. Մ. Հայրապետյան

օբյեկտներին, մարդ- բնություն փոխհարաբերություններին, սովորում են ճանաչել իրենց օրգանիզմը, յուրացնում օրգանիզմի խնամքի և հիգիենայի կանոնները, ձեռք բերում հաղորդակցվելու, համագործակցելու կարողություններ, ձևավորվում է էկոլոգիական գիտակցություն, առողջ ապրելակերպի մշակույթ[2]:

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը հնարավորություն է տալիս ձևավորել բարոյական, էկոլոգիական արժեքներ, որոնք բնութագրում են բնության և հասարակության, հայրենի եզերքի նկատմամբ կրտսեր դպրոցականների վերաբերմունքը: Բնությունը ոչ միայն ուսումնասիրության օբյեկտ է, այլև սովորողների մտավոր, ֆիզիկական, բարոյական զարգացման աղբյուր: Սերը բնության, կյանքի հանդեպ ծնում է մարդասիրական ամենաբարձր զգացմունքներ[3]:

[2] Հանրակրթության պետական չափորոշիչ, 2010:

[3] «Նախաշավիղ 2012» գիտամեթոդական հանդես:

«ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Տարրական կրթության համակարգում «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկայի կրթական բաղադրիչը ունի իր ուրույն տեղը, քանի որ միավորում է երկու կրթական ոլորտ՝ բնագիտական և հասարակական: Այս առումով դասընթացի հիմնական նպատակը սովորողների սոցիալական փորձի, էկոբարոյական յուրացումն է:

Դասընթացի ուսուցման գործընթացում սովորողները ձեռք են բերում համագիտական գիտելիքներ, սովորում են համեմատել, ընդհանրացնել, համակարգել, եզրահանգումներ ձևակերպել և այլն: «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի ուսուցման գործընթացը միտված է.

- վարքի բարոյական նորմերի յուրացմանը,
- սովորողի ընդհանուր մշակույթի ձևավորմանը,
- սոցիալական փորձի հարստացմանը,
- հաղորդակցական և համագործակցային կարողությունների ձևավորմանը,
- դպրոցական կյանքին հարմարմանը,
- բնության նկատմամբ հարգանքի, հոգատար վերաբերմունքի ձևավորմանը,
- դասընթացի էկոլոգիական ուղղվածության ապահովմանը,
- հայրենի բնաշխարհի մասին գիտելիքների յուրացման ճանապարհով հայրենիքի պատմության իմացությանը, նրա հանդեպ հոգատար վերաբերմունքի և պատասխանատվության ձևավորմանը:

Կրտսեր դպրոցականների կողմից գիտելիքների յուրացման արդյունավետությանընպաստում են մի շարք գործոններ՝

- զննական պարագաների օգտագործում, ընդ որում առաջնություն պետք է տալբնական օբյեկտների օգտագործմանը,
- հետազոտվող առարկայի և երևույթի խոսքային տպավորիչ նկարագրություն,
- գործնական աշխատանքների իրականացում՝ ներգրավելով սովորողի զգայարանները,

- առարկաների, երևույթների գիտակցական մտապահմանը միտված գործընթացներ, բազմակողմանի նկարագրում, պրոբլեմային հարցերի առաջադրում, ստեղծագործական-որոնողական առաջադրանքների կատարում,
- գործնական- հետազոտական աշխատանքների արդյունքների հիման վրա գծակարգերի, աղյուսակների կազմում, լրացում, մեկնաբանում,
- հետազոտվող առարկաների, երևույթների համեմատական բնութագրերի կազմում, ներկայացում:

Տարրական դպրոցում «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի ուսումնասիրումը նպաստում է՝

- կրտսեր դպրոցականների կողմից կյանքի և բնության ճանաչողության փոխադարձ կապերի բացահայտմանը,
- էկոլոգիական գիտելիքների, վարքի նորմերի յուրացմանը, նրանց բարոյական որակների զարգացմանը, արժեհամակարգի ձևավորմանը,
- սեփական կարողությունների բացահայտմանը, ինքնաճանաչմանը, առողջ ապրելակերպի մշակույթի տարրերի ձևավորմանը,
- հիմնական դպրոցում դասավանդվող հենքային դասընթացի յուրացման նախապատրաստմանը[4]:

<u>«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի գործառույթներն են.</u>

- Կրթական գործառույթ՝ «բնություն- մարդ- հասարակություն» համակարգի վերաբերյալ պատկերացումների, հասկացությունների ձևավորում, այդ համակարգում գործող օրենքների, օրինաչափությունների, փոխադարձ կապերի մասին գիտելիքների յուրացում, աշխարհի ամբողջական պատկերի ձևավորում:
- Զարգացնող գործառույթը ենթադրում է սովորողների հոգեբանական, անձնային զարգացում, վերլուծելու, համադրելու, գլխավորը երկրորդականից տարբերելու կարողությունների, գիտական աշխարհայացքի ձևավորում:
- Դաստիարակչական գործառույթը ներառում է երեխայի սոցիալականացման

[4] «Ես և շրջակա աշխարհը» դասագիրք Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան, Ն. Տողանյան, Լ. Ավագյան

խնդիրը և միտված է աշխարհի նկատմամբ հուզաարժեքային վերաբերմունքի ձևավորմանը, հասարակայնորեն նշանակալի բարոյական որակների, վարքի նորմերի պահպանման կարողությունների զարգացմանը:

- Մշակութաբանական գործառույթի շնորհիվ կրտսեր դպրոցականը հաղորդակից է դառնում ազգային, համամարդկային մշակութային ժառանգությանը, սովորում է արժևորել ազգայինը՝ որպես մշակույթի դրսևորման կարևոր ձև:
- Նախապատրաստական գործառույթն ապահովում է կրտսեր դպրոցականների կողմից ինչպես բնագիտական (կենսաբանություն, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն), այնպես էլ հումանիտար (պատմություն, գրականություն, հասարակագիտություն և այլն) գիտելիքների, գիտական հասկացությունների յուրացումը:

«ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ» ԱՌԱՐԿԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ

«Ես և շրջակա աշխարհը» առարկան կարևորվում է իր բովանդակային բազմազանությամբ: Այն բավականին հետաքրքիր է և իր ուրույն տեղն ու դերն ունի կրտսեր դպրոցականի սոցիալականացման գործընթացում:

Հայաստանի Հանրապետությունում սահմանվում և հրապարակվում են պետական կրթական չափորոշիչներ, որոնք շրջանավարտների կրթության մակարդակի և որակավորման գնահատման հիմքն են՝ անկախ նրանց ստացած կրթության ձևից և ուսումնական հաստատությունների կազմակերպական իրավական ձևից:

Միջնակարգ կրթության պետական չափորոշչի համաձայն՝ «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկան «Բնական գիտություններ և Հասարակական գիտություններ» ուսումնական բնագավառները ներկայացնող ինտեգրված պետական պարտադիր առարկա է 2- 4- րդ դասարանների համար[5]:

Համարյա տասը տարի տարրական դպրոցում չէր դասավանդվում բնագիտական և հասարակագիտական որևէ համակարգված պետական պարտադիր դասընթաց: Տարրական դպրոցում գործող ծրագրերից միայն Մայրենի առարկայի ծրագրի շրջանակում է մասնակիորեն լուծվել սովորողների՝ բնության և հասարակության վերաբերյալ նախագիտելիքների ձևավորման խնդիրը: «Ես և շրջակա աշխարհը» առարկան գալիս է լրացնելու հանրակրթական ծրագրերի վերոնշյալ բացթողումը:

Տարրական դպրոցում բնության տարրերի ու երևույթների ուսումնասիրությունը, սովորողի աշխարհայացքի համակարգված ձևավորմանը զուգահեռ, պետք է հնարավորություն ընձեռի բնության մեջ, դասարանում կամ տանը դիտումների, փորձերի և այլ տարաբնույթ գործնական աշխատանքների միջոցով սովորողի մեջ զարգացնելու Միջնակարգ կրթության պետական չափորոշչով սահմանված ճանաչողության մեթոդները: Բնության անկենդան և կենդանի

[5] Ալեքսանյան, Լ. Թորոսյան Ն. «Ես և շրջակա աշխարհը» ,Հանրակրթական դպրոցի դասագիրք 2-րդ դասարանի դասագիրք, «Աստղիկ Գրատուն», Երևան, 2014, 9էջ:

տարրերի, մարդու, Երկիր մոլորակի՝ որպես մարդկության ընդհանուր տան, ուսումնասիրությունը անհրաժեշտ է իրականացնել՝

ա. Սովորողի շրջապատում տուն, բնակավայր, բնական լանդշաֆտ դիտվող բնության տարրերի և երևույթների դիտարկումների, պարզունակ փորձերի նկարագրության,

բ. Սովորողի կողմից սեփական օրգանիզմը ճանաչելուն, առողջության պահպանմանը և անվտանգ կենսագործունեություն ծավալելուն ուղղված ուսումնական գործունեության տեսակների իրականացման,

գ. Սեփական շրջապատը հետազոտելու տարրական կարողությունների ու դրանց վերաբերյալ սեփական եզրահանգումների կատարման ապահովման,

դ. Հայաստանի բնության բազմազանության, մեր երկրի բնական ու հասարակական օբյեկտների ու երևույթների վերաբերյալ տարրական գիտելիքների ձևավորման,

ե. Երկիր մոլորակի տարածքային խոշոր միավորների՝ մայրցամաքների հայտնագործման ու հետազոտության մասին պատմությունների միջոցով:

Հանրակրթական նպատակների և կրթական բարեփոխումների խնդիրների տեսանկյունից կարևոր է առարկայի բովանդակության մեջ այնպիսի թեմաների ներառումը, որոնք կապահովեն երեխային՝ որպես աճող անհատականության սոցիալականացման, ինչպես նաև աշխարհաճանաչման և մարդկային հասարակության նկատմամբ սեփական դիրքորոշումը և հարաբերությունները ճշտելու, դրա միջոցով դեպի իրավական պետություն տանող ճանապարհի առաջին քայլերն անելու, իր երկրի արժանավոր քաղաքացի դառնալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Տարրական դպրոցի 2-4 րդ դասարաններում «Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է.

- Աշակերտներին ծանոթացնել իրենց շրջապատող աշխարհին, այնտեղ կատարվող բնական- հասարակական երևույթներին,
- Սովորեցնել ճանաչելու սեփական օրգանիզմը, ծանոթացնել օրգանիզմի խնամքի և հիգիենայի հիմնական կանոններին,

- Նպաստել սեփական արժանապատվության զգացումի, հանդուրժողականության, շրջապատի մարդկանց նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի ձևավորմանը,
- Օգնել դառնալու աշակերտական կոլեկտիվի լիիրավ անդամ, ձևավորել և զարգացնել ինքնուրույն որոշումներ կայացնելու, սեփական արարքները վերահսկելու, դրանց համար պատասխանատու լինելու գիտակցություն,
- Նպաստել աշակերտների ինքնադրսևորման ու ինքնաարտահայտման հմտությունների ձևավորմանը,
- Ձևավորել առողջ ապրելակերպին նպաստող վարքագիծ բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի անհրաժեշտության գիտակցում
- Նպաստել սեփական երկրի պատմամշակութային արժեքների ժառանգորդը լինելու գիտակցմանը:

Համագործակցելու, որոշումներ կայացնելու հմտություններ, հանդուրժողականություն, պատասխանատու վարքագիծ, քաղաքացիական ակտիվ դիրքորոշում և այլն: Ուսումնական գործունեության համար առաջարկված եղանակները նպաստում են թվարկածի արդյունավետ իրականացմանը:

«Ես և շրջակա աշխարհը» առարկան լուծում է մի շարք խնդիրներ՝ երեխայի՝ որպես անհատի, լայն մտահորիզոն ունեցող դպրոցականի ձևավորման հարցում[6]:

4-րդ դասարանի դասագրքում ընդգրկված դասերը պարունակում են գիտական բնույթի մեծածավալ նյութեր՝ տերմիններով ու հասկացություններով հագեցված, որոնց ուսուցումը ուսուցչից հսկայական և բազմաբովանդակ աշխատանք է պահանջում: Ուսումնադաստիարակչական գործընթացի կարևոր խնդիրներից է դառնում սովորողների տրամաբանական մտածողության ավելի խորացումն ու զարգացումը: Տրամաբանությունը մարզում է սովորողի միտքը, օգնում է նրանց հաղթահարել զանազան արգելքներ: Աշակերտը ձեռք է բերում հնարամտություն, դժվարին իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, ստեղծագործաբար մտածելու կարողություն, կատարում «հայտնագործություն»: Տրված նյութի յուրացման հետ մեկտեղ ձևավորվում է ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու

[6] Աստվածատրյան Մ., Արնաուդյան Ա., Վարդումյան Ս., և ուրիշներ «Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում», ԱՅՐԵՔՍ, Երևան 2001, 22 էջ:

անհրաժեշտություն: Հենց այս հմտությունները պետք է առավել խորացնել դասընթացի նյութերը մատուցելիս:

Առավելություն է նաև ժամաքանակի կրկնապատկումը, պահուստային ժամերի առկայությունը, որոնք կարող են օգտագործվել առանձին թեմաների բազմակողմանի մատուցման համար: Ելնելով թեմաներից՝ նպատակահարմար է կազմակերպել մի շարք խաղեր, վիկտորինաներ, մրցույթներ, քարտեզով ճանապարհորդություններ, բաց դասեր, նկարչական թեմատիկ ցուցահանդեսներ և այլ միջոցներ: Այս դասերի կազմակերպման աշխատանքներին ավելի հարմար է անդրադառնալ հետագայում առանձին նոր հոդվածով՝ նախատեսված 4-րդ դասարանի թեմաների վերաբերյալ ավելի մանրամասն ներկայացումով: Առայժմ հպանցիկ անդրադարձ կկատարվի նախատեսված հիմնական ուսուցման ձևերին՝ ելնելով դասընթացի թեմաներից:

Այսպես, օրինակ, Երկիր մոլորակը, ռելիեֆի հիմնական ձևերը, մայրցամաքները, օվկիանոսները անցնելիս նպատակահարմար է ընտրել թիմային մրցույթ-խաղի մեթոդը՝ դասերին համապատասխանող հարցերով, նկարելուկներով և այլ բովանդակությամբ փուլերով: Հարցերը պետք է ընդգրկեն նախատեսված ամբողջ թեման, նկարելուկները (ռեբուսներ), վերաբերեն հիմնական տերմիններին և հասկացություններին:

Հետաքրքիր են նաև «Ո՞վ ավելի արագ», «Գուշակիր մայրցամաքը (օվկիանոսը)», «Գտիր կեսը» և այլ փուլերով կազմակերպվող աշխարհագրական խաղ-վիկտորինաների անցկացումը: Մարմիններ, նյութեր, նրանց բնութագրական հատկանիշներին ծանոթացնել առարկաների ընտրված կույտից՝ ուսուցչի հրահանգին համապատասխան կատարելով խմբավորում: Տնտեսության, նրա ճյուղերի ու ենթաճյուղերի, օգտակար հանածոների վերաբերյալ դասերին կօգնեն դասարանում ստեղծվող ստենդները: «Հայաստանն իմ հայրենիքն է» դասերի ամփոփումը կատարել «Կառուցենք Հայաստանը» խաղ-մրցույթով՝ մի քանի փուլով. փոքրիկ բնութագրական քառատողով գտնել մարզը, տեղադրել իր տեղում, ապա տեղադրել նաև մի շարք տեղանուններ կամ դրանց նկարները՝ պատմամշակութային հուշարձանների, նշանավոր մարդկանց, նաև մարզին բնորոշ տնտեսության առավել բնութագրական ճյուղի գործարանի կամ արտադրանքի նկարը և այլն: Ճանապարհորդություններին վերաբերող թեմաներին կիրառել «Նավապետ-

ղեկապետ», «Հետևենք Մագելանին» և այլ նմանատիպ խաղեր՝ կիրառելով նաև համացանցից համապատասխան տեղեկատվություն՝ ճանապարհորդների անցած ուղու քարտեզային պատկերը, նավերի, ճանապարհորդների նկարներ և այլն:

Մարդ-հասարակություն-փոխհարաբերություններ դասերը ամփոփելիս կիրառել թեմատիկ նկարչական ցուցահանդեսի կամ էլ դերային խաղի մեթոդը ուսուցչի կողմից առաջարկվող սցենարով: Այսքանից հետո, ի մի բերելով խաղի մեթոդի կիրառման անհրաժեշտությունը, պետք է հիշել մեծ մանկավարժների խոսքերը. «Առանց խաղի չկա և չի կարող լինել լիարժեք մտավոր զարգացում: Խաղը մի հսկա, լուսավոր պատուհան է, որով երեխայի հոգեկան աշխարհն է լցվում շրջակա աշխարհի մասին հասկացությունների, պատկերացումների կենդանի հեղեղը: Խաղը կայծ է, որը հարցասիրության և հետաքրքրության կրակ է վառում»: Վ. Ա. Սուխոմլինսկի Խաղի դաստիրարակչական նշանակության մասին Մակարենկոն նշում էր, որ երեխան միշտ պետք է խաղա, նույնիսկ եթե կատարում է շատ լուրջ աշխատանք Խաղը զարգացնում է երեխայի երևակայությունը, ստեղծագործական կարողությունները, նպաստում ինքնուրույնության ձևավորմանն ու զարգացմանը, ակտիվացնում է ուշադրությունն ու տրամաբանությունը, ընդլայնում է աշխարհայացքը:

Երեխայի խաղն ընթանում է խոսքի ուղեկցմամբ: Խաղերը նպաստում են ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Դրանք դասը դարձնում են հետաքրքրաշարժ և ուշագրավ: Ստեղծվում է աշխատանքային տրամադրություն, դյուրին է դառնում գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացը[7]:

[7] Տողանյան Ն. և ուր. «Ես և շրջակա աշխարհը» 2-4-րդ ուսուցչի ձեռնարկ: Երևան, «ՄԱՆՄԱՐ»: 2013: 79 էջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով այս թեման, կատարեցինք մի քանի կարևոր եզրահանգումներ՝

- Տարրական դպրոցում «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկան կոչված է օգնելու երեխային ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես հասարակության մասնիկ: Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է «կառուցել» իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը:
- «Ես և շրջակա աշխարհը» առարկայի թեմաներն ընտրված են այնպես, որ աշակերտի մեջ քայլ առ քայլ ձևավորվի այն գիտակցությունը, որ ինքն աշխարհում մենակ չէ, որ իր սեփական ցանկություններից ու երազներից այն կողմ կան ուրիշ մարդիկ, որոնք իրեն նման չեն, և, ինչպես ինքը, անկրկնելի անհատականություն են, ուստի նույնպես արժանի են հարգանքի: Կրտսեր դպրոցականի պատկերացումները ընդլայնվում են շրջակա աշխարհի հետ ծանոթացման շնորհիվ: Երեխաներն ուսումնասիրում են իրենց բակը, քաղաքը, մարզը, հայրենիքը, նրա ներկան եւ անցյալը, պատմամշակութային արժեքները, ծանոթանում են տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց, սովորում են հասարակական վայրերում օրինակելի վարքագիծ դրսևորել, ձեռք են բերում հաղորդակցական հմտություններ, առողջ և անվտանգ ապրելակերպի համարանհրաժեշտ կարողություններ:
- Տարրական դպրոցում սովորողի գիտելիքները սերտորեն առնչվում են մայրենիին,մաթեմատիկային և այլ ուսումնական առարկաների: Շատ կարևոր է ի նկատի ունենալ, որ այս դասընթացի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և հմտությունները արժեքավոր են որպես հենք նոր գիտելիքների համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ, 2010:
2. Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցեր, Ձեռնարկ մանկավարժների համար, Երևան, 2005:
3. «Նախաշավիղ 2012» գիտամեթոդական հանդես
4. «Ես և շրջակա աշխարհը» դասագիրք Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան, Ն.Տողանյան, Լ. Ավագյան
5. «Բնության պահպանության հիմունքներ» Է. Մ. Հայրապետյան
6. Ալեքսանյան, Լ. Թորոսյան Ն. «Ես և շրջակա աշխարհը» ,Հանրակրթական դպրոցի դասագիրք 2-րդ դասարանի դասագիրք, «Աստղիկ Գրատուն», Երևան, 2014, 9էջ:
7. Աստվածատրյան Մ., Արնաուդյան Ա., Վարդումյան Ս., և ուրիշներ «Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում», ԱՅՐԵՔՍ, Երևան 2001, 22 էջ:
8. Տողանյան Ն. և ուր. «Ես և շրջակա աշխարհը» 2-4-րդ ուսուցչի ձեռնարկ: Երևան, «ՄԱՆՄԱՐ»: 2013: 79 էջ: